

40
ՍԱՆԴԻՄ

ԽՈՒՉԱԿ

40
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Դրոսքիւններ, որոնք ես չեմ դարձուիր՝
պէտք է խրկել «Խուզակ»ի վարչութեան,
Վառնա
Administration du Khousag Varna

Պոլիարիոյ հաւասար տարեկան 10 փր.
» » վեյսանեան 5 »
Օսար երկիրներու հաւասար տրկն. 12 »
» » » վցմայ. 6 »

Կ Ե Ղ Ծ

Թմբուկներու ու ցնծղաներու ձայներով ատեն մը ի լուր աշխարհի հուշակեցին թէ գերութիւնը աշխարհէս վերջած է, թէ ալ չըկան տէրեր և զերիներ. և ոչ ալ տառապողներ, ու տառապեցնողներ։ Ու իբր թէ տիրապետած ըլլար հաւասարութիւնը, աղատութիւնը և եղբայրութիւնը՝ եռագոյն դրօշը, խորհրդանշան այդ երեք վսեմ բառերուն, ծածանեցուցած են շատ երկիրներու մէջ։

Դրօշակներու և թղթերու վրայ անոնք ատուգիւ իրողութիւններ եղան ամբողջ եւրոպայի մէջ այնպէս՝ ինչպէս այն տեղատարաւ հեռագիրները, որոնցմով թուրք վալիներ ինքզինքնին կը պատուեն ապացուցանելու համար թէ անգործութիւնը և ապահովութիւնը կատարեալ է այն տեղեր՝ ուր նոյն միջոցին նմանը միջին դարու մէջ անգամ չը տեսնուած վայրագութիւններ տեղի կունենային։

Իրօք գերութիւնը վերցած է աշխարհէս, իրօք հաւասարութիւնը և աղատութիւնը տիրապետած են գործնականապէս. ահա բուն խնդիրը, որուն

վրայ մենք պարզ լեզուաւ մը համառօտակի պիտի խօսինք։

Մենք լաւ քննելով մարդկութեան այս օրուան առկալի վիճակը, անանկ կը գտնենք որ չէ թէ այդ հուշակուած աղատութիւնը և հաւասարութիւնը դուրսէն չեն ունեցած և չունին, այլ աւելի շիտակը ըսելով, մարդկային ազգին գերութեան ու ստրկութեան շղթաները աւելի ամրացած է այդ օրերէն առկին. ատոր պատճառները մէկէ աւելի են իսկ արմատը մէկ «տգիտութիւն» և «նախապաշարում»։

Եթէ իրօք գերութիւնը վերցած է և աղատութիւն ու հաւասարութիւն կայ, ի՞նչ են ուրեմն եւրոպայի մէջ միլիոններով լուսնի հաւաքուած զինուորները որոնք դատապարտած են հակառակ իրենց կամքին տարիներով ամենագեղեցիկ ժամանակներն զինուորութեամբ կամ բառովը գերութեամբ անցնելու, և ի հարկին հակառակ իրենց խղճին, հակառակ իրենց համոզումներուն քանի մը մարդերու աղտոտ շահերուն և կրքին ծառայելու՝ գնդակ ուղղելով այն անդեր, ուր թերեւ պիտի մեռցնէին այնպիսի էակներ, որոնք բռնութեան դէմ աղատութեան սիրուն համար կը պատեղադմէին և իրենց ոչինչ կը վստէին

ինչպէս որ են կրեւտացիները: Այսպէս մի-
թէ գերի չէ բոլոր եւրոպայի զինուո-
րութիւնը, որ 20 միլիոնէն աւելի
կը հաշուի: Ասոնք իրենց ապաներովը
մէկտեղ մէկ հրամանի մը վրայ կուր-
դէն կը շարժին, մէկ հրամանի մը վրայ
գնդակ ու թեղանօթներ կը տեղացնեն.
կը քանդեն, կը մեռցնեն, առանց ի-
մանալու թէ ի՞նչ կընեն և ինչո՞ւ հա-
մար կընեն. և այս այնքան մեծ կու-
րութեամբ որքան բնաւ չեն բլլար
կենդանիները. մէկը չը կրնար երբէք իր
համոզումներուն ու տրամադրութեանը
մօտիկ բնելով ետ կենալ կուրալ ար-
հնազանդել, վասն զի իբրեւ դաւալիք—
լաւ մը, որով կուղեն նախապաշարել
Հասարակութիւնը—գնդակահար կընեն
հրապարակաւ, յիսուաւոր գործ մը կա-
տարածի պէս:

Գարձեալ ակամայ գերիներ չեն
միթէ գործաւորները, որոնք գրաւտա-
կան ծանր ու մաշեցուցիչ աշխատու-
թիւններու դատապարտութենէն զրկուած
կեանքի բոլոր հաճոյքներէն, որոնցմով
անոնք կամ տարածամօրէն կը մեռնին
և կամ քիչ ատենէն վերջը անդտրմա-
նելի ցաւերով կ'իյնան վար ախտերով
ծիրած. աղէտ իրենց ընտանիքներուն
աղէտ մարդկութեան:

Գերիներ չեն միթէ այն 14—15
տարեկան գեղանի աղջիկները որոնք
կը ծախուին գրամով, մարդու մը՝ որ
զանոնք կը շահագործէ. այդ մարդը
այն ամէն գեղանիները աղքատ յար-
կերէն գրամով շրջնելով գնելէ վերջ
նախապէս իրենց կուռութիւնը կը ծախէ
հարուստներու և բարձրաստիճան ան-
ձերու որոնք վաճառուք և բարձրա-
պատիւ տիտղոսներն ունին ու յետոյ
հանրային տուն մը կը դնեն, ուր անոնք
կը ծախեն սէրը իրենց տէրոջը հաշ-
ւոյն: Գատապարտութեան գրամի հա-
մար ամէնէն կոշտ և ամէնէն բիրտ

մարդը իրենց գրկին մէջ սեղմելու, ի-
րենց այտերը անոր երկնցնելու, ու
այս կերպով շահագործուելու այդ տի-
րոջ կողմէն մինչեւ որ բարոյապէս ու
Ֆիզիքապէս լաւ մը կործանին: Ասոնք
գրողը կը կատարի տեսնելով որ որքան
թոյլ է իր գրիչը 19րդ. դարու գե-
րութիւնը եղածին պէս պատկերացնե-
լու մէջ:

Գերութիւնը աշխարհէն վերնալու
համար պէտք է նախապաշարումները
վերնան ժողովուրդներու գլխուն մէջէն,
պէտք է անոնք գիտունները բլլան. գի-
տուն իրենց իրաւունքներուն, գիտուն
իրենց ճշմարիտ պարտիւն և գիտուն
ամէն լանի. վասն զի, առանց այս
պայմանին, անոնք փոքրամասնութիւն
կազմող ծայրայեղ յեղափոխականներու
շնորհիւ և կամ լազդիւն լերմամբ որ-
քան ալ ազատ կարգերու տիրանան
իրենց տգիտութեամբը ու նա-
խապաշարումներովը վերստին պիտի
ստեղծեն այնպիսի լուռութիւններ, ու
րոնց յետոյ իրենք գերին պիտի դառ-
նան:

Սակայն թէ ժողովուրդը ո՞վ պիտի
ազատէ նախապաշարումներէ, ո՞վ պիտի
տայ անոնց գիտութեան մաքուր լոյ-
սերը. որպէս զի անոնք այլ եւս երկար
ատեն մ'իշին մէջ, չը խարխալեն, գլուխ-
նին շարունակ քարին դարնելէ ազա-
տեն. պէտք է միթէ տարակուսիլ որ
այդ պաշտօնը ամէնէն առաջ պիտի
կատարէ դպրոցը, յետոյ մամուլը:

Խնդիր է գիտնալ միայն թէ ի՞նչ
տեսակ դպրոց և ի՞նչ տեսակ մամուլ
է որ այդ գործը յաջողութեամբ պիտի
կրնայ կատարել:

Ոչ այն դպրոցը, ուր տակաւին
նախապաշարումներ դաս կը տրուին պաշ-
տօնապէս, և ոչ ալ այն մամուլը, որ
ժողովուրդին թոյլ կողմերը կը շոյէ և
նախապաշարումները կը շեշտէ երբէք

չը պիտի կրնան այդ գործը կատարել, պիտի կրնան միայն աւելի բնութիւնը և դժուարացնել ճշմարիտ գործողներուն գործը. այդ գործը պիտի կրնայ տեսնել այն դպրոցը միայն որ իրապէս լսողութիւնն ազատած է կշիռի ազդեցութենէն և հոն նախապաշտօններու տեղ դաս կը տրուին այնպիսի դիտութիւններ, որոնց լոյսովը միայն կրնան մարդիկ ազատիլ ամէն կերպ թշուառութիւններէն. և այն մամուլը միայն, որ առանց մտածելու ժողովրդին դայթակցութիւնը և դատաւիտութիւնը, բոլոր նախապաշտօններու արմատին կը յարձակի՝ դանդաղ փնտրելու համար, ինչպէս այն վերադարձը որ մտիկ չընելով վերաւորին ազդակները ու հայհոյանքները վերահասին կարողովը կը կտրէ ամէն փտութիւնները և այսպէս կազատէ մարդը:

Պարոն Լուի Պերքուսի հետեւեալ տեսակին քաղցնաւորները կը յուսնէ՝ թէ հասկցող ընթերցողներուն խորհրդածութեան առարկան պիտի ըլլայ նոյնպէս ինչպէս որ եղած ըլլալու է «Ի՞նչ է ընկերվարութիւնը»:

ԱՊՐԵՆՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

ԵՒ ԻՐ

ՏՐԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Յետին չքաւորութեան պարագային մէջ, «ամէն ինչ հասարակաց է, եւ այսպիսի «կարօտութեան մը մէջ գանձողը կրնայ իր «ապրուստին համար պէտք ունեցածը առնել, «երբ չգտնուի մէկը որ ուզէ այդ պէտքը «հոգալ: Միեւնոյն պատճառին համար, մէկը «կրնայ սուրիշին ինչքէն ոգորմութիւն տալ, «եթէ ուրիշ ճար չկայ օգնելու անոր որ կը «դանուի յետին չքաւորութեան մը մէջ»:

Սուրբ-Թովմաս

«Կանցի ընկերվարական Միլիօն՝ վեց «ամիս բանտարկութեան դատապարտուեցաւ «ըսած ըլլալուն համար անգործներուն թէ «կենդանիները անօթութենէ չեն մեռնիր, «ոչ ալ պէտք է որ մարդը անօթի մնայ»:

(Բոլոր յրագիրները)

Կը սկսին ճանչնալ որ ամէն մարդկային էակ՝ որ կը ծնի կաղմակերպուած ընկերութեան մը մէջ, իրաւունք ունի հոն գտնելու հարկ եղածը չքաւորութենէ ապահով ապրելու համար հոն: Մէկը իրաւունք չունի ինքզինք մեռցնելու կա՛մ անձնասպանութեամբ կա՛մ անօթութենէ մեռնելով:

Սակայն, ապրելու այս իրաւունքը՝ զոր ամէնուն կուտան—եւ ո՞վ պիտի ըլլար զայն չճանչնալու չափ բարբարոս—միայն տեսականութեան մէջ գոյութիւն ունի: Գործնականին մէջ, ընկերութիւնը բան մը չընէր որպէս զի այս իրաւունքը ըլլայ կենդանի, իրական բան մը:

Արդարեւ, ապրելու համար, պէտք է կարենալ ուտել: Արդ, անօթի եղողը պէտք էր որ ուտելու իրաւունքը ունենար չմեռնելու համար, կեանքը պահպանելու համար:

Ո՞ւր են ասոր համար մասնաւորապէս եղած հիմնարկութիւնները: Բնաւ չկան: Եւ որ աւելին է, եթէ խեղճ մէկը՝ անօթութենէ չմեռնելու համար, միաքէն անցնէր ճաշարան մը երթալ կերակուր ուտելու առանց կերածը վճարելու բան մ'ունենալու, ոտտիկանութիւնը պիտի ձերբակալէր զինք: Բանտ պիտի տարուէր եւ դատապարտուէր: Ուրիշ մէկը՝ որ եթէ հայ մը գողնար կամ քիչ մը բանջարեղէն, մի եւ նոյն վիճակը պիտի ունենար: Այս կարգի դատապարտութիւնները հազուադէպ չեն մեր քաղաքակրթութեան ընկերութեան մէջ որ գրամ կը գտնէ անօգուտ բանակ մը պահելու, թաւրոններու օգնելու կամ իր տօները եւ հրախաղութիւնները վճարելու համար:

Թերեւս ինձ ըսեն. «Ձեր ապրելու իրաւունքը՝ ինչպէս որ զայն կը հասկնաք, գողնալու իրաւունքին կ'երթայ»:

Ինչո՞ւ չէ, կը պատասխանենք:

Ձեր ընկերութիւնը չուրանար ապրելու իրաւունքը, բայց որովհետեւ բան մը չընէր զայն ազգու կերպով կարգադրելու համար, գողնալու իրաւունքը՝ բացարձակ

չքառորութեան պարագային մէջ, հարկ կը դառնայ ուրեմն:

Գողնալու այս իրաւունքը՝ մեր քիչ մը առաջ նշանակած պայմաններուն մէջ, արդարացում է ամէն ժամանակներէն: Մենք տեսանք թէ ի՞նչ կը մատնէր այդ մասին Սուրբ Թովմաս:

Տէր Բօթիէ արքան՝ մօտերս Courrier de Bruxelles (*) թերթին հետ ունեցած մէկ բանակութիւն մէջ մեկին կերպով կը յայտարարէր թէ կ'ընդունէր չխառնութեան պահումն առնելու իրաւունքը:

15 Յունուար 1893, le qaye de liege (**) թերթին մէջ Տէր Բօթիէ արքան կ'ըսէր:

«Ամէն մարդկային էակ՝ որ չկրնար ազատել կեանքը, այսինքն թէ յետին չքառորութեան պարագային մէջ է եւ ուրիշ ճար չկայ անկէ ազատելու, իր իրաւունքն ի գործ կը դնէ առաջին հանդիպման ինչհետեւ մեզեւն առնելով բնաւ չմեղեցնելու չափ ըրած գործը գողութիւն մը չէ»:

Բարիզի մեծ կաթոլիկ թերթ մը, l'Univers (**), 6 Յունուար 1893, կ'ըսէր միեւնոյն իմաստով:

«Բարիզի պատժական բողոքներու ատեանը, կ'ըսէր այս թերթը, վաւերացուց Բօնիթուզի պատժական դատարանին կողմէ վճռուած ճշման ամիս քանակաւորութեան պարտիքը եօթանասուն տարեկան ծերունիի մը համար որ արտի մը մէջէն գողցած է հրէ սեպտիկ եւ մեկ կաղաւթ: Իր պարագան՝ իրեն պէս չափ մը խեղճերու պարագան էր: Անօթութենէ ուժասպառ եւ մէկու մը դիմելու անկարող ըլլալով առած էր իրեն ապուր մը շինելու չափ, եւ ապուրը ուտելէ վերջ եկած էր պարկեշտօրէն ինքզինք յանձնելու:

«Խիղճը, բնութիւնը կը բողոքեն օրէնքի մը գործադրութեան դէմ որ տասն ամիս բանտարկութեամբ կը պատժէ ծերունի մը, ըլլայ իսկ վերապարտ (récipivisite) մը, գողցած ըլլալուն համար ապրելու անհրաժեշտ քիչ մը բանջարեղէն: Օրէնքը գէշ շինուած է, օրէնքը անիրաւ է: Մեր նա-

բովանական խրոխտ Լիզուրկոսները ուզեցին պէտք չունենալ Եկեղեցիին՝ օրէնսդրական գործերուն մէջ: ուզեցին իրենք իրենց օրէնք մը շինել, աշխարհական օրէնք մը: Եթէ խորհուրդ հարցուցած ըլլային աստուածաբանութեան, նոյն իսկ բնութեան, գոնէ մտադրած պիտի ըլլային գողութեան վերաբերեալ իրենց օրենսդրութեան մէջ անօրութեան քաջաւորութիւնը: Վաղաքական օրէնքէն աւելի սղջամիտ, աւելի մարդասիրական կրօնական օրէնքին համար բնաւ գողութիւն չկայ յետեւ չխառնութեան պարագային մէջ: Խեղճ մը իրաւունք ունի առնելու հայ մը, ինչ մը քանցարեղէն, անօրութեան չմեղեցնելու համար: Ողբերգութիւն է, բնութիւնն է, արդարութիւնն է . . . : Ահա մեր պատժական օրինագիրքին մէջ մտցուելիք ստիպողական բարեփոխում մը»:

Ըսելիք չկայ: Միայն թէ ասոնք՝ ուրոյն կարծիքներ են: Մինչեւ հիմայ, ո՛ր եւ է խորհրդարանի մը մէջ մէկը չառաջարկեց գողութիւնը պատժող պատժական օրինագիրքին վերաբնութիւնը, հոն մտցնելու անօթի եղողին համար անհրաժեշտը գողնալու իրաւունքը, որպէս զի անօթին չմեղեցնի (*):

Եւ որ աւելին է, ֆրանսացի կաթոլիկ երեսփոխանները խորհրդարանին մէջ քուէարկեցին վերապարտներու վերաբերող վայրենի օրէնքին մէկ յօդուածը, որ կ'ընդունէր վտարելու այսինքն մահուան կը դատապար-

(*) Բրուսսէլի պատժական օրինագիրքի:— Յօդուած 370:— Մինչեւ 150 մարք տուգանքով կամ դուրս չելլելու պատժով պիտի պատժուի

1.
2.
3.
4.

5. Ով որ գողցած ըլլայ, անմիջապէս սպառնալու համար, ուստեսեղեկներ, ընկերներ չնշին արժեքով կամ անենապզտի փախուցնելու:

.
քիւ 5ով նախատեսուած պարագային մէջ, հետապնդող մը տեղի պիտի ունենայ միայն ինքնապաշտի վրայ: Խնդրանքը կրնայ ետ առնուիլ:

(*) Գուրիկի Տրիստի (Պրիւքսէլի սուրհանգակ): Վ. Խ.

(**) Լը Բեի Տը Լիեժ (Լիեժի երկիր):

(***) Լ'Իւնիվէր (Տիեզերք):

աէ այն խեղճերը, որոնք եթէ երեք անգամ հասարակաց ճամբուն վրայ պառկելու յանդանքին մէջ բռնուին:

Դատարկաշրջիկներու մասին պիւճիգական օրէնքը՝ Փրանսական օրէնքէն պակաս անգութ չէ:

Աղքատութիւնը՝ պուրժուաներու համար, միայն մոլութիւն մը չէ, ոճի՛ր մ'է:

Դեռ քիչ մ'առեն առաջ, բնկերվարականներու հակառակ կանի թերթ մը Het volke(*) կը խօսէր մի եւ նոյն իմաստով ինչպէս Գօթիէ արբան եւ շ'ուելիկի թերթը, երբ կ'ըսէր.

Եկեղեցին կը պաշտպանէ այս մեծ սկզբունքը իր հաստատութենէն ի վեր: Այո՛, մարդս կրնայ նոյն իսկ առնել ինչ որ իրեն անհրաժեշտ է ապրելու համար, եթէ իրեն անկարելի է զայն հոգալ կա՛մ աշխատութեամբ եւ կա՛մ ուրիշ միջոցներով: Այսպիսի պարագայի մը մէջ առնելը գողնալ չե եկեղեցիին աջին, միևնույն անգամ երեք դասարանները վնոկին սրտիս մը»:

(Շարունակելի)

ԻՆՉ Է ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԴԵՐՈՒ ԵՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ

(Շար. նախորդ քիւէն)

Ռօմէնէս՝ մակածութեան առաջին աստիճան կը նկատէ ամենահասարակ այն գէպքը երբ մակածութիւնը՝ իբրեւ հոգեբանական գործողութիւն, կապուած է կազմաւորական ճանաչողութեան հետ, երբ նա առանձին տեղի չունենար մեր գիտակցութեան մէջ, երբ նա կը կազմէ ճանաչողութեան անբաժան մէկ մասը: Օրինակի համար, եթէ կոյրի մը աչքերը յանկարծ բացուին, առաջին անգամ նա չկրնար ճանչնալ եւ զատել իրերը. քիչ քիչ կը սկսի դատարկել առարկայի մ'առաջ բերած գրգռումները եւ այդ գործողութիւնը տեղի կ'ունենայ անոր

(*) Ֆլանտրերէն լեզուով կը նշանակէ ժողովուրդը (չէթ ֆօլք):

Ծ. Վ.

գիտակցութեան մէջ. գրգռումը եւ ճանաչողութիւնը մի եւ նոյն ատեն տեղի չեն ունենար, այլ մի քիչ ժամանակ կ'անցնի դատարկութեան համար: Մինչդեռ առողջ մարդը՝ գրգռման հետ անմիջապէս կը ճանչնայ նաեւ. մակածութիւնը կը կատարուի անգիտակցաբար. այս տեսակներու շարքին մէջ պէտք է դնել մեր զգայարաններուն մեզ հասուցած բոլոր մտապատկերները ու ասոնց կազմութիւնը:

Երկրորդ աստիճանը՝ որ Սթենսըրի նաշելով կը կազմէ առաջինը, այն է որ երբ մենք մակածութեան միջոցաւ առաջին անգամ կը գտնենք գոգորդութիւններու (association) եւ պատճառականութիւններու (causalité) մեծ մասը: Այդ կը նշանակէ որ երբ կարգ մ'իբրեւ, յատկութիւններ եւ յարաբերութիւններ սովորաբար կը ներկայանան մի եւ նոյն ատեն եւ շարունակ կը կրկնուին, ժամանակի ընթացքին մէջ բաւ է որ դուք այդ իրերէն, յատկութիւններէն եւ յարաբերութիւններէն մէկը նկատէք ու ճանչնաք որպէս զի ձեր առաջ պատկերանայ ամբողջ կարգը կամ խումբը մակածութեան միջոցաւ: Օրինակի համար, որսորդին համար շատ անգամ բաւական է տեսնել թռչունին միայն մեծութիւնը եւ գոյնը, մակածութիւնը կը լրացնէ միւս յատկութիւնները: Ի հարկ է շատ անգամ կը խաբուի գտնելով սպասուած կտոյար (bécasse)ին տեղ սարեակ (merle) մը:

Երրորդ աստիճանը՝ այն է որ երբ իրերու յատկութիւններու եւ յարաբերութիւններու մէջ կայ գիտակցական համեմատութիւն: Այս աստիճանին մէջ մենք կրնանք գործնական համեմատութիւններ ընել. բայց այս տրամաբանական աշխատանքը ինքնին չհասնիր մեր գիտակցութեան: Երախտներու բանականութիւնը՝ մեծ մասով այդ տեսակէն է:

Վերջապէս ամենաբարձր աստիճանը՝ այն է, երբ այդ գործողութիւնը՝ իբրեւ մի մտաւոր աշխատանք, կը հասնի մեր գիտակցութեան. այդ աստիճանին մէջ միայն կարելի կը դառնայ մեր կամքի համաձայն վերացականացնել յատկութիւնները եւ յարաբերութիւնները. միայն այս վերջին աստիճանին մէջ հնարաւոր կը դառնայ գաղափարները վերածել խորհրդանիշերու (symbole) այսինքն խօսքերու:

Գալով այժմ՝ անասնական աշխարհին, եթէ չ'ընդունինք որ անոնք պատկերներ եւ ձայներ ճանչնալու ընդունակութիւնը ունին, պէտք է ընդունել որ՝ անոնց սեւտողութիւնը եւ լսողութիւնը մերիններուն պէս կազմուած ըլլալով, անոնք արդէն ձեռք բերած են մակածութեան առաջին աստիճանը: Թէ գոյութիւն ունի կենդանիներուն մէջ մակածութեան երկրորդ աստիճանը, ցոյց կուտան հետեւեալ փաստերը: Շունը լսելով իր ախրով ձայնը անմիջապէս կ'ելլեալացնէ որ այդ իր տէրն է. անոր գիտակցութեան մէջ կ'արթննան բոլոր այն յատկութիւնները որոնք զուգորդուած են այդ ձայնին հետ: Այն սովորութիւնը՝ որ պարտէզներու մէջ կը դնեն մարգածե խրուելակներ, միթէ կենդանիներու զուգորդութեան յատկութիւնը ունենալը չապացուցանո՞ր: Այդ խաչածե փայտը, հին վերարկուն եւ գլխարկը կը յիշեցնեն մարդ մը եւ խեղճ կենդանիին գիտակցութեան մէջ անմիջապէս կ'արթննայ պարտիզպանի հետ ջերմ կապուած անխուսափելի մահակի առաջ բերած ցաւը:

Վերջապէս երրորդ աստիճանը՝ որ միայն իսկապէս արժանի է բանականութիւն կոչուելուն, նոյնպէս կը տեսնենք բոլոր տաքարին կենդանիներուն մէջ ինչպէս նաեւ քանի մը անողնաւորներու մէջ. այստեղ օրինակներու թիւը այնքան շատ է որ կը դժուարանանք ընտրութիւն ընելու:

Տարուինը կը պատմէ թէ ինչպէս կարբին (օւազօ) փոս փորելու ատենը կը ձգեն քիչ մը կճեպ ինչպէս փոսի վրայ նոյնպէս եւ չուրջը: Փամանակէ մը վերջ կարբը՝ քաշքշելով կը հեռացնէ փոսի մէջ ինկած կեղեւը բաւական հեռու. յետոյ կը վերադառնայ եւ մէկ մէկ կը հեռացնէ փոսի շուրջ ինկածները, նախատեսելով որ անոնք ալ կրնան իյնալ: Եւ Տարուին կ'աւելցնէ թէ ինչպէս զանազանելու է բոլոր այդ գործողութիւնը ո՞ր եւ է մարդու մը զատողութենէն:

Մենք չենք գիտեր թէ ինչպէս կը կատարուի այդ գործողութիւնը անոր ուղիղին մէջ: Կարբը լեզու չունի որ մեզ պատմէ, թո՛ղ թէ երախաները լեզու ալ ունին եւ դեռ չեն կրնար պատմել եւ բացատրել իրենց վարմունքները: սակայն պարզ է որ նա այդ ըրաւ մտածելով եւ կանխատեսելով:

Մենք միայն կրնանք ենթադրել որ կենդանիները հասած են գիտակցութեան երրորդ աստիճանին եւ թէ անասուններու ու մարդերու մէջ բնականութեան հոգի վրայ կայ միայն աստիճանի զանազանութիւն:

Չենք գիտեր թէ երկրաբանական երրորդ շրջանին երկրորդ դարուն մէջ գոյութիւն ունեցող մարդը խօսիլ գիտէ՞ր արդեօք: Բայց ներկայիս մէջ բոլոր գոյութիւն ունեցող ցեղերու մէջ կը գտնենք մենք այդ յատկութիւնը, այնպէս որ աստիճանի զանազանութիւնը շատ հաւանական է:

Վանի որ բառերը՝ վերացականութեան գոյութեան ապացոյցներն են եւ քանի որ վերելք ընդունեցինք որ կենդանիները զուրկ են բառերու գործածութենէն, ուստի կըրնանք ընդունիլ որ հասած չեն բանականութեան բարձրագոյն աստիճանին կամ անկէ զուրկ են:

Թէեւ վերջեւ կ'աշխատին ցոյց տալ բառերու գոյութիւնը կապիկներուն բերանը, քանի որ այդ հետազոտութիւնները լուրջ բայց գիտական քննադատութեան ենթարկուած չեն, կարելի չէ անոնց վրայ հիմնուելով ընդունիլ թէ վերացականութիւնը կայ կենդանիներուն մէջ:

Վերելք յիշուած եւ նմանօրինակ բազմաթիւ փաստեր ստիպեցին վերջապէս բոլոր գիտնականները ընդունիլ որ չկայ բնութեան զանազանութիւն անասուններու եւ մարդերու մէջ: Բայց վէճը գեա չէր վերջացած երբ նորէն սկսաւ կռիւը շնորհիւ Գաթրը-Ֆաթի, որ ընդունելով իրականութիւնը, փոխեց հարցը փոխադրելով տարբերութեան խնդիրը բանականութենէն բարոյականութեան հոգի վրայ:

Բարոյականութեան աղբիւր չեն նկատուիր բնազանցական եւ կրօնական տօկմաներէ ծագած կարգ ու կանոնները, որոնց համեմատ մարդիկ պէտք է կազմակերպէին իրենց մէջի յարաբերութիւնները: Այլ կը փնտռուին մարդու բնութեան մէջ բարոյականութեան ծնունդի աղբիւրները, ուր նա կը գոյանայ ամենապարզ կերպով եւ կը զարգանայ ու կը փոփոխուի արտաքին կեանքի պայմաններուն փոփոխելուն համեմատ:

Բարոյականութեան զարգացումը հիմնուած է ինչպէս գիտակցութեան բոլոր երեւոյթները ջղային բջիժի հիմնական այն

յատկութեան վրայ, որուն չնորհիւ մի գրգռում՝ որ տեղի կունենայ մեր յօրինուածութեան ո՛ր եւ է բջիջին մէջ, կը թողուանոր մէջ իր հետքը, այնպէս որ այդ բջիջը երկրորդ անգամ աւելի քիչ արտաքին ուժով կրնայ առաջ բերել մի եւ նոյն գրգռումը, ուրիշ խօսքով, բջիջը կը դառնայ աւելի կարող եւ աւելի ընդունակ՝ այդ յատկութիւնն է որ հիմ կը կազմէ մարդերու մտաւոր կրթութեան ինչպէս նաեւ կենդանիներու կրթութեան (dressage): Բարոյական կրթութիւնը մի եւ նոյն հոգի վրայ տեղի կ'ունենայ ինչպէս կենդանիներու ընտանեցումը—հասարակական պատիժներու չնորհիւ որոնք յառաջացած են կեանքի գոյութեան անհրաժեշտութիւնէն: Քանի մը գործողութիւններ յայտարարուելով վատ, վնասակար, անբարոյական, պատիժի վախէն մարդկութիւնը կը զսպէ իր մէջ այդ գործողութիւններու իրականացումը եւ ժամանակի ընթացքին մէջ արդէն առանց գիտակցական զսպումի անգիտակցաբար հետու կը կենայ այդ գործողութիւններէն եւ զանոնք անբարոյական կը համարէ: մինչդեռ ցեղին օգտակար կարող մը ուրիշ գործողութիւններ կրելով օրէնքներու հովանաւորութիւնը ժամանակի ընթացքին մէջ, երբ մինչեւ անգամ անոնք օգտակար ըլլալէ կը դադրին, անգիտակցօրէն կը կատարուին եւ կը նկատուին բարոյական:

(Շարունակելի)

**ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն**

(Շար. 86-րդ թիւ 2)

Ա.

ԻՆՉ Է ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Բայց ո՞րքէ փիլիսոփայութիւնը կ'ընդունի իր բանաձեւերուն վրայ մարդկային ընկերութիւնները ձեւելու եւ ձեւակերպելու այս հրաշալի կարողութիւնը: Այս կարողութիւնը իր մէջ չէ՝ անիկայ՝ ճշմարտութեան մէջ է, որուն ամենաբարձր արտայայտութիւնն է փիլիսոփայութիւնը, ամէն ժա-

մանակի մէջ եւ ամէն ժամանակի համար: Իբր անհատ առնուելով, փիլիսոփայ մը ոչինչ է՝ բայց, եթէ կրցաւ ամբօրին ընդունել տալ իր գաղափարները, ասոնք չեն ուշանար իրողութիւններու փոխուելու:

Չպիտի՞ կրնային նոյնը ըսել տրիբունի մը պետական մարդու մը, տնտեսաբանի մը համար: Ոչ՝ անոնք պիտի կրնան ո՛ր եւ է կարեւորութիւն մ'ունեցող նորութիւններու նշանը տալ, բայց իրենց միշտ սահմանափակ գործողութիւնը բնա՛ւ չպիտի հասնի այն աստիճանին մինչեւ փոփոխելու ամբողջ ընկերական կազմակերպութիւնը: Պատճառը այս է որ անոնք կը գործեն որոշեալ ճշմարտութեան մ'անունով, մինչդեռ փիլիսոփայն կը խօսի նոյն իսկ ճշմարտութեանը անունով, ճշմարտութիւններու այս ամբողջութեան անունով, որ ազգերու հոգին է գրեթէ: Մարդ կրնայ տրիբունի մը դիմագրել, որովհետեւ տեւ կրնայ անկէ կարծիքով սարքերիլ աւոր առաջարկած մասնաւոր առարկային վրայ. ժողովուրդ մը չկռուի մի անգամ ընդունած փիլիսոփայութեանը հետ, որքան ատեն որ ասոր տեղ ուրիշ մ'անցած չէ, վառն դի, այնպէս ընելով, ինքիքին հետ հակասութեան մէջ պիտի լինար, եւ որովհետեւ փիլիսոփայական դրութեան մը մէջ ամէն ինչ իրարու կապուած է, չպիտի կրնար անար հետեւութիւններէն մին մերժել առանց ուրանալու անոր բոլոր սկզբունքները եւ առանց տապալելու իր յատուկ դաւանանքներուն ամբողջ շէնքը:

Մենք ըսինք որ փիլիսոփայութիւնը՝ իրեւ գլխաւոր պաշտօն ունէր մարդուն գիտութիւնը, եւ հետեւաբար ընկերական գիտութիւնները, որոնք անհրաժեշտ հետեւութիւնն են անոր, եւ այս բանը՝ էական ընդհանուր գիտութեան եւ կարողութիւններու ու մեթոտներու մասնաւոր գիտութեան միջոցով. բայց անիկայ ուրիշ պաշտօն մ'ալ ունի—կործանել այն դաւանանքները որոնց ժամանակը անցած է եւ որոնք արգելք մը դարձած են յառաջդիմութիւններուն:

Վոյթէր բնա՛ւ չզբաղեցաւ էաբանութեամբ, հոգեբանութեամբ կամ մեթոտաբանութեամբ, եւ սակայն փիլիսոփաներուն կարգը դասուած է ինք: Իր բոլորովին քննադատական գործը՝ անհուն եղաւ: Ո եւ է դրութիւն մը չստեղծեց, բայց պարապ տեղ

բացաւ նոր ստեղծագործութեան մը համար: Մեծ եւ բազմաթիւ ծառայութիւններ տալէն վերջը՝ հին փիլիսոփայութիւնը խոչընդոտ մը դարձած էր մտածման համար: Վոյթեր անոր հետ թեւ թեւի կռուեցաւ, ոչ միայն այն ամէնուն համար որ անոր կը մնար փիլիսոփայական դպրոցներէ, այլ նաեւ այն կրօնքին համար որ մեծցած էր անոր հովանիին տակ եւ տակաւին կը կրէր անոր դրոշմը:

Կրօնական սոկմաները, թո՛ղ լաւ գիտնան ստիկայ, ուրիշ բան չեն բայց եթէ փիլիսոփայութեան հաստատուններուն մեղմացած եւ խորհրդանշական թարգմանութիւնը: Ատենով կրօնքին միջոցով է որ փիլիսոփայութիւնը մատչելի դարձուած էր ամբոխներուն, բայց ինչ պայմանով՝ տրամաբանութիւնները՝ այլաբանութիւններու եւ բանաձեւերը աւանդավէպերու փոխելու պայմանով: Փիլիսոփայութիւնը կը հոգար կմախքը, ոսկրները, ամէն ինչ որ հաստատուն էր, բայց զգեստաւորումները եւ միսերը՝ բանաստեղծութեան գործն էին:

Եւ հոտ էր մանաւանդ ինչ որ կը կազմէր կրօնական սոկմային զօրութիւնը: Բանականութիւնը մինակ՝ շատ պաղ ըլլալով չոգեւորներ ամբոխները, բայց երբ անոր կը միանայ, նոյն իսկ զայն այլայլելով, ինչ որ երեւակայութիւնը կրնայ յղանալ ամենէն վսեմ, անոր զօրութիւնը անգիմադրելի է: Աւելցնենք նաեւ որ հին փիլիսոփայական գրութիւններուն գլխաւոր յանցանքներէն մէկը եղաւ մեղանշել միշտ մեկուսականութեամբ, այսինքն թէ իրերուն ունեցած երեւոյթներէն մին նկատել միայն, եւ ստորագասել կամ նոյն իսկ ուրանալ բոլոր միւսները: Կրօնքները՝ ընդհանրապէս, խոստովին այս խուժերէն: Ինչ որ անոնք առին փիլիսոփայութեանէն, նոյն իսկ ամէնէն խոշոր հակասութիւններուն մէջ խնաւու վտանգով՝ լայնցուցին զայն, լրացուցին, կամ գէթ զայն մերկացուցին խոտութեան այս ծայրայեղութենէն որ կ'արտաամբեցնէր խիղճերը:

Ասոր մէջ, կրօնքները աւելօք վեր եղան փիլիսոփայութիւններէն որոնցմէ քաղած էին իրենց գլխաւոր սոկմաները՝ ուստի անոնցմէ վերջ ապրեցան: Մենք ասոր մէկ ուշագրաւ օրինակը ունինք աչքի առաջ: Երկար ատեն կայ որ հոգեպաշտու-

թիւնը ա՛լ չբանեցներ նիւթական շահերու պաշտումին նուիրուած արգի ընկերութիւններուն վրայ շատ երեւուն ազդեցութիւն մը, եւ քրիստոնէութիւնը՝ որ այս գրութեան ուրիշ բանը չէ բայց եթէ խորհրդանշանը, թէպէտ խիստ ակարացած է, թէպէտ կ'երեւայ իր հիմին վրայ, սակայն դեռ գոյութիւն ունի եւ պիտի իյնայ միայն այն ատեն երբ աւելի յառաջացած փիլիսոփայութիւն մը փոխանակէ անոր ուժասպառ սոկմաներուն՝ ընդունելի նոր դասախօսներ:

Փիլիսոփայութիւնը եւ սոկման՝ թէեւ սկիզբը իրարու միացած եւ գրեթէ խառնուած, չկրցան զուգահեռաբար զարգանալ՝ առանց իրարու տալու բուն յարձակումներ: Ասոր համար երկու պատճառներ կային. նախ, այն խորշումը զոր դիցաբանական գեղադարձութիւնները կ'ազդէին իրենք զիրենք մանաւանդ խորհող ծախող մարդերու երկրորդ, սոկմայի հիմնադիրներուն կողմէ ողջմտութեան եղած այս զիջումները, զորս կը մերժէին խորհողներ միշտ հակամէտ մինչեւ վերջին ծայրը մղելու մի անգամ ընդունուած սկզբունքներուն նոյն իսկ խելքի գէմ հետեւութիւնները: Աւելցնենք նաեւ որ տիրող փիլիսոփայութեան քովը՝ որուն ժողովրդական մեկնութիւնն էր միայն կրօնքը, ամէն վայրկեան կը ծագէին նոր գրութիւններ, որոնց թարգմանները զիրենք ստիպուած կը տեսնէին կռուելու մի եւ նոյն ատեն թէ՛ այն գրութեան գէմ զոր կ'ուզէին փոխանակել եւ թէ՛ այն սոկմանուն գէմ որոնց ծնունդ տուած էր այդ գրութիւնը:

Փիլիսոփայութիւններուն եւ կրօնքներուն մէջտեղ եղած կապերը շատ սերտ ըլլալով չենք կրնար ասոնց մէկուն վրայ խօսիլ առանց միւսին վրայ խօսելու: Ասով մէկտեղ միայն երկրորդական կերպով է որ պիտի խօսինք կրօնական սոկմաներուն վրայ, եւ միայն յիշելու համար ինչ որ ասոնք առին փիլիսոփայական զանազան գրութիւններէն եւ հաշիւի առնելու համար այն ազդեցութիւնը՝ զոր իրենց կտրգին բանեցուցին մարդկային մտածման զարգացումներուն վրայ:

(Շարունակելի)

[ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ] ՆԻՔՕԼԱ ՏՐԱԿՈՒԼԷԻ
Отговорникъ:: Никола Д. Драгулевъ.